



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2022թ. թիվ 746-Ա

ԼԱՐԻՍԱ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով Լ.Մեսրոպյանի 31.10.2022թ. բացատրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված աշխատանքային կարգապահությունը խախտելու համար, այն է՝ աշխատանքի ժամին ուսումնական հաստատության աշխատակիցներին աշխատաժամից շուտ ազատ արձակելու համար «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Լարիսա Մեսրոպյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Գրիգորյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

04/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱՀՆԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՀՆԱՏՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 4
ք.Վանաձոր